



ԽՕՍԶ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

Մեզի համար խոր վիշտ է հաստատել թե ողբերգական կացութիւնը կը շարունակէ աներեւոյ գործել երբեմնի երջանիկ Լիբանանի մաքուր երկնքի տակ, ուր Արաբ աստուածասէր ժողովուրդի զաւակներուն երակներէն առատ արիւն կը հոսի տակաւին:

Մենք կը մնանք անձանձորոյ՞ աղօթող որ սիրոյ և համերաշխութեան փրկարար ոգին իջնէ Լիբանանի եղբայր համայնքներուն կեանքին վրայ և երկիրն ու բնակչութիւնը ամբողջ գտնեն իրենց խաղաղութիւնը և բարօրութիւնը:

Ողբերգական այս պայմաններուն մէջ կը շարունակէ ծանր ըլլալ նաև Հայ համայնքի վիճակը: Հազարատոկոս մատնուած են թշուառութեան, շատեր նոյնիսկ կարօտ՝ պնակ մը տաք կերակուրի: Ծանր է մանաւանդ երեխաներու և վիրատուներու վիճակը:

Մենք հոգեպէս մխիթարուեցանք որ մէկ տարի առաջ Մեր հրատարակած կոչը լայն արձագանգ գտաւ ու Արևմտեան Եւրոպայի Մեր Հայրապետական Պատուիրակի ու եկեղեցական մարմիններու կազմակերպած հանգանակութեամբ և Մայր Աթոռիս տրամադրած միջոցներով գոյացած անելի քան երեք հարիւր հազար դոլլարի գումարը բաշխուեցաւ: Լիբանանի՝ անխտիր բոլոր Հայ կարօտեալներուն, Պէյրութի մէջ Մեր կազմած Օգնութեան Յանձնախումբի միջոցաւ:

Մենք մխիթարուեցանք հաստատելով թէ նաև այլ եկեղեցական ու բարեսիրական կազմակերպութիւններ սփիւտքի տարբեր շրջաններէն, փութացին օգնութիւններ հասցնել իրենց Լիբանանցի աղէտեալ եղբայրներուն ու քոյրերուն: Բարձր գնահատելով պարտինք յիշել Ամերիկայի Է. Բ. Ը. Միութեան կազմակերպած օգնութեան գործը որ մինչև օրս կը շարունակուի:

Աղէտը սակայն այնքան մեծ է և կարիքները այնքան շատ ու բազմապիսի, որ Մենք խղճի պարտք կը նկատենք վերստին կոչ ուղղել համայն մեր ժողովուրդին, մեր քոյր եկեղեցական կեդրոններուն և Հայ կազմակերպութիւններուն որ չխնայեն իրենց եղբայրական օգնութիւնը Լիբանանի կարօտեալ ժողովուրդին և ի մասնաւորի Հայ վարժարաններուն:

Օգնութիւնը պէտք է կատարուի առատաձեռնութեամբ ու անյապաղ, որպէսզի Լիբանանահայութիւնը զգայ թէ լքուած չէ և թէ ամբողջ մեր ազգը իր կողքին կը գտնուի, վշտակից իրեն, օգնական իրեն: Ամէն հնարաւոր միջոց ի գործ պէտք է դրուի, որպէսզի Լիբանանի Հայերը, այս ծանր պայմաններուն մէջ չլուսահատին և հնարաւոր չափով պահպանեն ու ամրապնդեն իրենց կրօնական ու կրթական համայնքային կազմակերպուած կեանքը, անշարժ մնալով իրենց տեղը, հաստատօրէն լաւատես Լիբանանի խաղաղ ու լուսատու ապագայի նկատմամբ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն օրհնութիւն աստուածային համայն հաւատաւոր ու բարեսիրտ մեր ժողովուրդին, այժմ և յաւիտեան. ամէն:

Կ Ա Զ Գ Է Ն Ա

ԿԱՌՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

18 Հոկտեմբեր 1976 թ.

Սուրբ Էջմիածին